ԳՅՈՒՂԻ ԹԵՄԱՆ ԱՎ. ԱՀԱՐՈՆՅԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՄ

ԽԱՉԻԿՅԱՆ Գ. Վ.

Ավետիս Ահարոնյանը մանկությունը, պատանեկությունն ու երիտասարդությունն անցկացրել է Հայաստանի արևելյան և արևմըտյան հատվածների սահմանագծին տարածված Սուրմալուի գավառում, և մարդկանց հետ մերձավոր շփումների շնորհիվ նրան հոգեհարազատ էին դարձել հայության երկու կեսին էլ հուզող կենսական երևույթներն ու խնդիրները: Գրողը լավ էր ճանաչում իր հայրենի գավառի իրականությունը, ծննդավայր Իգդիրմավայի, նաև Իգդիրի ու շրջակայքի գյուղերի բնակիչներին, նրանց կենցաղը, սովորույթները, բնավորության հիմնական գծերն ու բարոյահոգեբանական առանձնահատկությունները, ինչպես նաև ծանոթ էր նրանց բանահյուսական ստեղծագործություններին:

Հայրենի եզերքի մարդկանց կյանքը Ավ. Ահարոնյանը 1900-ա-կան թթ. գեղարվեստորեն պատկերել է մի շարք պատմվածքնե- րում, որոնք տպագրվել են «Մուրճի» 1901-1903 թթ. համարներում: Դրանք մի քանի այլ գործերի հետ նա ամփոփել է 1904 թ. Թիֆլիսում հրատարակված «Արազը» ժողովածուում: Օսմանյան կայսրության և ցարական Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող հայության երկու հատվածների վիճակի ու կենսապայմանների միջև զգալի տարբերություններ կային: Գլխավորն այն էր, որ արևմտահայությունը շարունակ գտնվում էր ֆիզիկական ոչնչացման վտանգի առջև, մինչդեռ արևելահայությունը նման սպառնալիքից զերծ էր: Այս հանգամանքն էլ յուրահատկություններ է հաղորդել արևելահայ գյուղաշխարհի կյանքին, ինչն արտացոլվել է Ահարոնյանի արձակ գործերում՝ յուրովի բեկվելով հեղինակի աշխարհայացքի, գրական-ստեղծագործական սկզբունքների միջով: Նրա գեղագիտական հայացքներին բնորոշ են նեոռոմանտիկական պատկերացումները: Ազատ, անկախ և միացյալ հայրենիքի իդեալն այս երկերում միահյուսվել է արևելահայության սոցիալ-կենցաղային, կրոնական խնդիրների, հերոսականի ու ողբերգականի, մարդու ֆիզիկական ու հոգևոր կարողությունների լիարժեք իրացման գեղարվեստական արծարծումների հետ: Այս ամենի հետևանքով ժողովածուի որոշ պատմվածքներում գրողի ստեղծագործական հղացքից ծնվել են այնպիսի հորինվածքներ, որոնցում շրջանառվում են թե՛ արևմըտահայությանը, թե՛ արևելահայությանն առնչվող իրողություններ. դա ի վերջո պայմանավորված էր ոչ միայն հայության երկու հատվածների համար ընդհանուր, համազգային շահերի միասնության մասին հեղինակի համոզմունքներով, այլև պատմաքաղաքական իրավիճակով ու պատկերված տեղանքի աշխարհագրական դիրքով՝ Արևմտյան Հայաստանին Սուրմալուի գավառի մերձավորությամբ:

Վերոհիշյալ նկատառումների տեսանկյունից ուշագրավ են արևմըտահայության կոտորածներից խույս տված և արևելահայ հատվածի սահմանամերձ գյուղերից մեկում ապաստանած երկու կույր աշուղների հոգեբանությունն ու ճակատագիրը («Կույրերը», 1902)։ Նրանք այստեղ ևս կայուն հանգրվան չեն գտնում։ Կիսախելագար, կրոնախև մի կնոջից իմանալով զինվորների կողմից հալածանքներ սկսվելու, ինչպես նաև քրդերից սպասվող վտանգի մասին, շատերի պես խուճապի մատնվելով՝ նրանք իրենց «մութ ու խավար» կյանքն ավարտում են Արաքսի ջրերի մեջ։ Հեղինակի՝ կերպարների մեջ հոգեբանական զննումներ կատարելու նախասիրությունն իրեն զգացնել է տալիս նաև այստեղ։ Նա ընթերցողի ուշադրությունը սևեռում է իրենց նկատմամբ մարդկանց լավ ու վատ վերաբերմունքով աշխարհը գնահատելու՝ կույր աշուղների հակասական ըմբռնումների վրա։ Մեկը կարծում էր, որ հարսանիքն է լավ, մյուսը՝ մահը։ Բայց և այնպես, նույնիսկ հարսանիքի ժամանակ տխրությունն ու լացն էր այս աշուղների երգերի հիմնական թեման։ Իսկ դրա պատճառը նրանց հայրենիքում յուրայինների ծանր կացությունն էր, արյունալի իրողությունները։ Պատմվածքի նախադրության մեջ կընոջն սպանած ամուսնու և վերջինիս՝ արդար պատժի ենթարկելու մասին հորինված պատմությամբ գրողը յուրահատուկ հակադրություն է ստեղծել արևմտահայ և արևելահայ իրականությունների միջև։ Եթե աշուղների հայրենիքում ապօրինությունները, հալածանքներն ու կոտորածները դրսևորվում էին որպես օրինաչափություն ու անկասելի պատուհաս, ապա սահմանի այս կողմում գեթ կենցաղային դրդապատճառներով կատարած հանցագործության մեջ մեղադրվողը կարող էր նաև պատժվել։

«Լեռներում» փոքրածավալ պատմվածքը «Մուրճում» (1902, N 10, էջ 5-12) տպագրվել է «Պատկեր» ենթավերնագրով։ Այն իր թեմայով ու գաղափարական հարցադրմամբ մասամբ առնչվում է «Ազատության ճանապարհին» ժողովածուի (Թիֆլիս, 1906) «Խայը» պատմվածքին, թեև ունի նաև այլ, նոր շեշտադրումներ։ Սուրմալուի գավառից Բարդողյան լեռներով Արևմտյան Հայաստան անցնելիս երկու ընկերների և երկու զինված քրդերի հանդիպման դրվագով գրողը կրկին անդրադառնում է տեղաբնիկ հայերի և քուրդ ավազակների բախման թեմային։ Այդ առիթով նա կրկին քննարկման առարկա է դարձնում շատերի մեջ նստվածք տված՝ ճակատագրի անշրջելիության մասին նախապաշարումների առկայությունը, իր հերոսների միջոցով բացահայտում խնդրի հանդեպ եղած տարակույսներն ու առողջ, իրատեսական կենսադիրքորոշումը։ Ընկերներից մեկի փորձառության, ուժի ու հնարամտության շնորհիվ զինված երկու քրդերին հաղթելը մի անգամ ևս ժխտում է ճակատագրից մարդու անվերապահ կախվածության գաղափարը։ Հաստատվում է այն միտքը, որ ճակատագրի նկատմամբ կույր հավատը լոկ ձախողված մարդկանց կենսափիլիսոփայությունն է։ «Այսպես է, սիրելի՛ս, կյանքի մեծ ճանապարհին, կյանքի մեծ կռվի մեջ, թե խորտակվում ենք, ասում ենք՝ գրվածը կատարվեց, թե հաղթող ենք հանդիսանում, վտանգից ազատվելով, ասում ենք՝ճակատներիս

գրված չէր: Ինձ համար ճակատը լերկ ոսկր է, ուր ոչինչ գրված չէ և չի կարող լինել»[1], - ասում է պատմողի՝ քրդերին զինաթափ արած խիզախ ընկերը: Նկատենք, որ այս եզրակացությունը կատարվում է նաև պատմողի ու նրա ընկերոջ միջև ճակատագրի մասին դրույթի և հակադրույթի ձևով ընթացող փիլիսոփայական զրույցի միջոցով: Ահարոնյանի գեղարվեստում կյանքի ճանաչողության նախասիրած իմաստասիրական այս եղանակն ավելի հասկանալի է դարձնում կենսական ճշմարտություն արտահայտող նրա միտքը: Իսկ կատարված ընդհանրացումը դառնում է ավելի հիմնավոր ու համոզիչ: Այսպես՝ պատմողը հավատում է ճակատագրի գոյությանը, բայց և այնպես, վախենում է զինված ավազակների անսպասելի հարձակումից: «-Եթե հավատում ես, էլ ինչո՞ւ ես վախենում, ինչ գրված է, այն էլ կը կատարվի,- ասում է ընկերը: -Իրավունք ունիս, բայց վախենում եմ» (205): Պատմողը դժվարանում է բացատրել իր վախի բուն պատճառը, նրան օգնում է ուղեկից ընկերը՝ գրողի իդեալ-հերոսը, նրա կենսափիլիսոփայության արտահայտիչը: «Ինչո՞ւ ես վախենում,- ասաց նա դանդաղությամբ,- երևի նրա համար, որ չես իմանում արդյոք ճակատիդ գրվա՞ծն է կատարվում, թե չգրվածը» (206): Բնագրում այս միտքն ընդգծված է՝ ցույց տալով, թե հեղինակը շատ է կարևորել այն: Նա նրբորեն նկատել է, որ պատմողի՝ բախտի կամ ճակատագրի հանդեպ կույր, անքննադատ հավատը պարզապես լայնորեն տարածված նախապաշարումների հետևանք է: Մինչդեռ նա ևս ենթագիտակցորեն զգում է, որ իրողությունները կարող են ընթանալ թվացյալ «ճակատագրի նախասահմանածից» զատ մի այլ տարբերակով: Պատմվածքի բովանդակության շրջանակում հեղինակն իբրև համադրույթ-եզրակացություն հաստատում է այն միտքը, որ մարդը, կամքի ու բանականության շնորհիվ, ինքն է իր բախտի տերը: Ի տարբերություն պատմողի, նրա ընկերն ընդունակ է նաև մարդկային դաժանության գործոնը շրջանցելով, տեսնել ու գնահատել հայրենի բնության գեղեցկությունը: Նա հիանում է Բարդողյան լեռնաշղթայով, իսկ պատմողն ասում է. «Սիրուն են, թո՛ղ հիմա մի խումբ գլուխ կտրողներ առաջներս դուրս գան, նոր կիմանաս սիրուն են, թե չէ»: Զրուցակիցը պատասխանում է. «Էլի նրանք սիրուն կմնան, սարն ի՞նչ անի, որ ես ու դու հիմա այստեղ իրար մորթոտենք» (204): Այսպիսով՝ այս գործում նեոռոմանտիզմին բնորոշ առանձնահատկությունների տեսանկյունից հորինվածքի կենտրոնում, ի դեմս պատմողի ուղեկից-ընկերոջ, ստեղծվել է համարձակ, ինքնավստահ, զարգացած-ազատամիտ, ընդհանուր առմամբ ֆիզիկապես և բարոյապես «ուժեղ անհատի» կերպար:

Գրողի ազատասիրական պաթոսի գեղարվեստական արտահայտություններից է «Լեռնականը» (1902) պատմվածքի բանտարկված լեռնցու կերպարը: Այս անանուն հերոսի ազատության տենչն էութենական, բնազդական պահանջ է: Բանտի սահմանափակ տարածքը նրա համար ոչ միայն անբնական միջավայր է, այլև իր ֆիզիկական

[1] **Ահարոնյան Ա.,** *Երկերի ժողովածու, հ. Երկրորդ, Թեհրան, 1982, էջ 209: Այսուհետև այս հատորից արվող մեջբերումների էջերը կնշվեն բնագրին կից:*

ապրելաձևի համար անհարիր ու անտանելի: Լեռնցու բնական-օրգանական ազատասիրությունն անգիտակցական-ինքնաբավ դրսեվորմամբ հակադրված է իր վիճակի հետ թեկուզև ժամանակավորապես հաշտված, բանտարկված պատմողի ինքնագիտակցությանը: Վերջինս, ներհայեցողությամբ ու ինքնազննմամբ, դիմացի բանտախցում պարզապես զրուցընկեր ունենալու ցանկության մասին մտորելով, զգում է, որ ըստ էության չարիք է կամենում ինչ-որ մեկին: Մի զգացում, ինչը պայմանավորված էր տվյալ հասարակական-քաղաքական միջավայրում ճնշված, հոգեպես ճզմված անհատի ինքնազգացողությամբ: Եվ ահա, «բնական մարդու» դրվատման հեղինակային հայեցակարգի արտահայտություն դարձած «լեռնականի» կերպարը շղթայված հսկայի տպավորություն է գործում պատմողի վրա: Հսկա, որը, սակայն, անասելիորեն տառապում էր՝ ազատ շնչելու, ազատ շարժվելու հնարավորություն չունենալու պատճառով: Կալանավորված լեռնականի ինքնախոշտանգումը ոչ միայն ամաչեցնում, այլև իր փոխարեն նրան ազատ տեսնելու ցանկություն է առաջ բերում բանտարկված պատմողի մեջ: «Երբ առաջին օրը նրան բերին, ես ինձ երջանիկ զգացի, այժմ ամաչում էի իմ այդ զգացմունքի համար, ի սրտե կուզեի, որ նրան ազատ արձակեն, իսկույն արձակեն, ես մնամ դարձյալ մենակ, դարձյալ անընկեր ու կենդանի թաղված, միայն թե չտեսնեմ այդ տանջված, այլանդակված դեմքը…» (277): Բանտից ի վերջո ազատված պատմողը շարունակում է տանջվել այն գիտակցությունից, որ ինքը հարմարվել էր բանտի պայմաններին: Մինչդեռ բանտարկված լեռնցին, ազատությունից զրկված լինելով, չէր կարողացել այլևս ապրել և ինքնասպանություն էր գործել: «Վայրենի» ու «խենթ» լեռնականի տարերային, բնազդական ազատասիրությունը յուրօրինակ ներգործություն էր կատարել պատմողի վրա: Ու թեև նա, իր համբերատարության շնորհիվ, ազատվել էր բանտից, բայց և այնպես լեռնականի ինքնասպանությունը նրա մեջ ազատությանը ռոմանտիկորեն՝ ինքնամոռաց, մաքսիմալիստորեն՝ անմնացորդ նվիրվելու պահանջ էր առաջ բերել: Պատմվածքը թե՛ հերոսների անցած ուղու, թե՛ դեպի հեռուները (ըստ երևույթին, Արևմտյան Հայաստան) անդարձ գնալու, թե՛ ազատասիրության պաթոսի արծարծումներով հեղինակի գեղարվեստական ու գաղափարական հայեցակետերից միտված էր հարգանք ներշնչելու երկու կայսրությունների տիրապետության տակ գտնվող հայության հատվածներում ազատության ու դրա համար պայքարող նվիրյալների հանդեպ:

Ցարական Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող արևելահայ գյուղն ուներ իր առանձնահատուկ կենսակերպն ու կենցաղին բնորոշ իրողությունները: Գյուղացիներն այստեղ տառապում էին գյուղաշխարհի վրա ծանրացած սոցիալական հակասությունների, պետական կառույցների, տեղական իշխանությունների անտարբերության, նախապաշարումների, տգիտության, ծայրահեղ հետամընացության ու աղքատության հետևանքով: Այսպես՝ «Մարդագելում» (1900) նկարագրված են այն տառապանքները, որոնք պաշարում են Սուրմալուի գավառակի գյուղերից մեկի բնակիչներին:Ա-

բարատյան դաշտի ամառային շոգի պատճառով՝ իրենց տան տանիքում քնող գյուղացիները տարբեր փորձանքների են ենթարկվում: Մեկի երեխային կարիճն է կծում, մեկ ուրիշի երեխային գիշերով փախցնում է բորենին: Դեպքն այնպիսի սարսափ է առաջացնում, որ տղամարդիկ, սնահավատությունից մղված, դրան «մարդագել» անվանելով, արտառոց հրեշ են համարում: Իսկ կանայք, Եղսան բաջու «հեռատես» երևակայությանը տուրք տալով, հրեշին նույնիսկ որոնում և «գտնում են» համագյուղացիների մեջ: Նման եղանակով փորձում են տարերայնորեն հաշվեհարդար տեսնել իրենց համար ատելի, անբարոյական համարվող, բայց թշվառ, կյանքի դեմ չարացած մի կնոջից: Այդպիսի տխմար տրամաբանության զոհ է դառնում գյուղացիների կողմից չսիրված Ծուռ-Փարին, որն իբրև թե ավանդական բարոյականության դեմ արարքներ էր գործել,ապօրինի երեխաներ ունեցել: Եվ գազանից վախեցած խելահեղ գեղջկուհիներն իրենք են չարիք գործում՝ հանիրավի սպանելով Ծուռ-Փարիին, իսկ նրա աղջիկները անտերության են մատնվում ու կործանվում: Ծուռ-Փարիի մահից հետո, ինչ խոսք, «մարդագելի» պատուհասած չարիքից գյուղը չի ազատվում: Գազանը շարունակում է երեխաներ փախցնել՝ անամոք վշտի մեջ թողնելով նրանց ծնողներին: Արձակագիրը գյուղացիներին, նրանց խուճապն ու ձեռնարկած միջոցները գազանի դեմ պայքարելու համար նկարագրել է ռեալիստորեն, կենցաղային մանրամասերով ու վախեցած, անօգնական մարդկանց հոգեբանության ճշմարտացի նկարագրով: Հեղինակը նպատակահարմար է համարում հետադարձ հայացքով, լուսավորված մարդու կենսափիլիսոփայության հայեցակետից իմաստավորել կատարվածը: Տարիներ են անցել, սակայն գյուղում ժամանակը շատ դանդաղ է առաջ գնում, մարդիկ շարունակում են տառապել ի- րենց տգիտության, անօգնականության, պետական աջակցությունից զրկված լինելու պատճառով: Նշենք, որ «Մարդագելը» ժողովրդական սնահավատությունը գեղարվեստորեն պատկերող տպավորիչ երկ է: Հեղինակը հանդես է բերում ժողովրդին նման չարիքից ազատելու առումով թումանյանական (հիշենք «Լոռեցի Սաքոն» և այլ գործեր) մոտեցմանը բնորոշ ինքնաբուխ հոգացողություն:

«Ցավը» (1900) պատմվածքում պատկերված է անասունների մեջ տարածված վարակիչ հիվանդության հանդեպ հետամնաց գյուղացիների անզորությունն ու անօգնական վիճակը: Նրանք, նախապաշարումների մեջ սուզված ու անտերության մատնված, զրկվում են իրենց կերակրող անասուններից: Եվ դա համարում են աստվածատուր չարիք: Այդպես է մտածում նաև պատմվածքի գլխավոր կերպարը՝ միջին կարողության տեր Գևոն: Չարիքի հանդեպ նրա ծառացումը խոսքով ուղղվում է երկնքի դեմ, իսկ գործնականում (իր սնահավատության հետևանքով)՝ իշխանությունների կարգադրությամբ գյուղի շուրջը շարված սև դրոշակների: Հուսահատված գյուղացին կարծում էր, թե ընդվզելով իշխանությունների ձեռնարկած նման միջոցառման (կարանտինի) դեմ և սև դրոշակներն այրելով՝ անասունների հիվանդության վարակը կկանխվի: Գյուղացի Գևոյի

հախուռն պոռթկումը սև դրոշակների դեմ նաև տարերային ընդվզում էր ցարական իշխանությունների ներկայացուցիչների հանդեպ, որոնք անասունների հիվանդության դեմն առնելու իրենց անճարակությունն ու անտարբերությունն էին ցուցաբերել:

Արևելահայ գյուղացու կյանքը ևս լի էր դառնություններով. գյուղի իշխաններն ու տերերը՝ ռեսն ու տանուտերը, ցարական պաշտոնյաներն ու զինվորները տարբեր առիթներով ծեծում ու պատժում էին նրանց: «Մեծ ճանապարհին» (1901) պատմվածքի հերոսն ասում է. «է՞հ, ի՞նչ անենք, ո՞ւմ չեն ծեծում. մեր գյուղում ռեսը ճիպոտ ունի, որի ծայրից արյուն է կաթում, տանուտերը խոմ Աստված փրկի» (230): Նա իր մանկության շրջանից պատմում է մի դեպք, երբ ինքն ականատես է եղել, թե ինչպես են իր հորն անխնա ծեծել՝ սայլը մեծ («թագավորական ճանապարհից») դուրս չբերելու և քառաձի կառքի ու երկու զինված ուղեկիցների ճանապարհն արագ ազատել չկարողանալու պատճառով: Պատմողի մանկության շրջանի ընկալումներով նկարագրված, թվում է՝ նաև տպավորապաշտական (իմպրեսիոնիստական) հայացքով դիտված, գեղարվեստորեն անթերի վերականգնված իրականության պատկերը աղավաղում է մարդկային հարաբերությունների անկատարությունը, այս դեպքում՝ գյուղացու հանդեպ ունևորների կամ իշխանավորների արհամարհական վերաբերմունքը, որոնք, անպատժելիությունից հանդգնացած, ոտնահարում էին առանց այդ էլ չարքաշ կյանքով ապրող գեղջուկի մարդկային արժանապատվությունը: Ցարական իշխանությունների տեղական կառույցներում ևս հասարակ գյուղացին չէր կարող լիարժեք պաշտպանություն գտնել: Ուստի՝ հիշարժան է նաև պատմվածքի ավարտը: Երբ հեղինակը հիշյալ դեպքը պատմողին հարցնում է, թե նրա հայրը չբողոքե՞ց ուր որ հարկն է, պատասխանը լինում է լոկ բարձրաձայն քրքիջը: Այսինքն՝ տեղական իշխանություններին գյուղացու ներկայացրած բողոքն ապարդյուն ու անիմաստ էր լինելու:

Թեև Ավ. Ահարոնյանը սոցիալական բուն հակասությունների թեմային ուղղակիորեն քիչ է անդրադարձել իր ստեղծագործություններում, բայց չի էլ անտեսել կամ շրջանցել: Սոցիալական չարիքի վերլուծման ու գեղարվեստական արտացոլման լայն ասպարեզը, թվում է, թողնելով ռեալիստներին՝ առանձին ստեղծագործություններում նա ուշադրությունն ավելի շատ կենտրոնացնում է անհատների ներաշխարհում դրա առաջ բերած բարոյահոգեբանական հետևանքների վրա: Ահա այս մոտեցումն՝ իր հարազատ երկրամասի գյուղերից մեկի ունևորների կամայականությունների, իրենց իրավունքների չարաշահումների շեշտադրմամբ է պատկերվել «Արազը» (1902) պատմվածքում: Հրապարակախոսական ներքին կրակով, անողոք դիտարկումներով գրված նախադրության մեջ ուրվագրվում են Արարատյան դաշտավայրի գյուղացու չարքաշ կյանքի ծանոթ իրողություններն ու ճշմարտությունները:

Պատմվածքում բախումը, մի կողմից՝ մարդու և բնության, այս դեպքում՝ Արաքսի (Արազի) տարերքի, մյուս կողմից՝ գյուղի իշխանավորների և իրենց գոյությունը մի կերպ պահելու համար գլխիկոր

աշխատող, անպաշտպան գյուղացիների միջև է: Արազը և՛ կերակրում է, և՛ չարիք պատճառում գյուղացիներին: Քանի որ խիստ դժվար էր գետի ջրով ոռոգել ափամերձ դաշտերը, այդ իսկ պատճառով ժողովրդի մեջ հակասական վերաբերմունք էր առաջացել նրա նկատմամբ: Մարդիկ վախեցել են նրանից, նրա մասին հեքիաթ են հորինել. պատմվածքում հեղինակը օգտագործել է «Արազի ձուկ աղջիկը» հեքիաթը՝ իր գրական մշակմամբ: Իսկ պատմվածքի գլխավոր կերպարը՝ գյուղացի Գալոն, նույնիսկ գետը նմանեցնում է վիշապի: Հեղինակային հղացքի մեջ սոցիալական, փիլիսոփայական վերլուծության ելակետն, ի վերջո, հանգում էր բնության և մարդու հակադրության մասին պատկերացումը հերոսի մեջ փարատելուն և գյուղացիների սոցիալական ու տնտեսական ծանր կացության մեջ մարդկային գործոնի՝ գյուղական համայնքի շերտավորվածության դերակատարությունը կարևորելուն: Պատմվածքի բովանդակությունը կրկին բացահայտված է գրողի նախասիրած փիլիսոփայական ճանաչողության՝ դրույթ-հակադրույթ-համադրույթ տրամաբանությամբ: Գալոյին հրեշավոր է թվում գյուղացիներից փող կորզելու՝ իշխանավորների մեքենայությունը: Պարզվում է, որ ռեսը, տանուտերը և ջրպետը, զզիր Վարդոյի միջոցով, գյուղացիների մի մասից կաշառք են վերցնում և չեն մասնակցում Արաքսի ջրերի դեմ պատնեշ սարքելու աշխատանքներին: Իսկ զզիր Վարդոն ծառերի ճյուղերից պատրաստված ամբարտակի լարերն էր կտրատում՝ աշխատանքը ձգձգելու, համագյուղացիներին հողագործական աշխատանքներից կտրելու, նրանց տնտեսությանը վնաս հասցնելու նպատակով: Գալոն համոզվում է, որ բնությունը սնուցող մայր է մարդու համար, և մարդն է, որ իր անհատական կամ խմբային շահադիտական նպատակներից ելնելով՝ ողբերգություն է առաջ բերում այդ հարաբերությունների ընթացքում: Եվ Վարդոյին ու նրա հովանավորներին նկատի ունենալով՝ նա բացականչում է. «Մա՛յր, մա՛յր, դու մա՛յր ես, Արա՛զ, վիշապները ու բորենիները սրանք են» (136): Գալոն, ի տարբերություն Եղոյի, ըմբոստ է և չի կարող համակերպվել իր աչքի առջև կատարվող չարիքի հետ: Արևելահայ գյուղական միջավայրը պատկերող պատմվածքում ևս գրողին հրապուրում է սոցիալական չարիքի դեմ ընդվզող հերոսին տեսնելու, նրան հայտնաբերելու մղումը: Այդպիսին է Գալոն, որը, չհանդուրժելով զզիրի՝ ողջ գյուղի համար չարչարվող մարդկանց ջանքերի դեմ ուղղված չարագործությունը, ջրամույն է անում նրան՝ ինքն էլ զոհվելով հանցագործի հետ:

Գրողը գյուղաշխարհում շարունակում է որոնել հերոսականի կամ գյուղական համայնքի համար անձնվիրություն հանդես բերելու դրսևորումները: Գլխավոր կերպարի կողմից համագյուղացիների պատվի համար խիզախ կեցվածքի մի ինքնաբուխ արտահայտություն է պատկերված «Փախի տարին: Ա. Ռեսը» պատմվածքի հիմնական դրվագում (այս գործը տպագրվել է «Մուրճի» 1902 թ. N 8-ում և չի զետեղվել «Արազը» ժողովածուում): Պատմվածքի հյուսվածքում ակներև է դառնում, որ արևելահայ սահմանամերձ գյուղի հայ ընտանիքների պատիվը ռուսական բանակի հարբած զինվորների

կողմից արատավորելու փաստեր են եղել: Պատմվածքը գրված է նախասիրած գրական հոսանքի պոետիկայի ոգով, մասնավորապես, տվյալ տարածաշրջանում քիչ թե շատ խիզախություն դրսևորող ուժեր և անհատներ հայտնաբերելու միտումով: Բ… գյուղի գյուղացիների վախկոտությանը գրողը հակադրել է մյուս գյուղերի բնակիչների՝ դ…եցիների և խ…եցիների, իսկ, որ ավելի կարևոր է և պատմվածքում էլ առաջին պլան է մղված՝ գյուղի նոր ընտրված ռես Նավոյի համարձակությունը: Ռուսերեն մի քանի բառ իմացող և ըստ այդմ էլ «Պադաժդի» մականունն ստացած ռեսը ճիգ ու ջանք չի խնայում երկու հարբած ռուս զինվորների ոտնձգություններից իր համագյուղացիներին պաշտպանելու համար: Նա անձնուրաց դիմադրություն է ցույց տալիս նախկին ռես, ծեր Օհանի տունը ներխուժող երկու ռուս զինվորներին: Սակայն աջակցություն չի ստանում ո՛չ ծեր Օհանի ու նրա հաղթանդամ, բայց վախկոտ տղաների և ո՛չ էլ մյուս գյուղացիների կողմից: Համագյուղացու ընտանիքի պատիվը պաշտպանելիս էլ հարբած զինվորների անագորույն ծեծից նահատակվում է միայնակ մնացած ռես Նավոն:

Հայտնի է, որ նեոռոմանտիկները հաճախ էին օգտագործում լեգենդի, երգերի, գրական հեքիաթի ժանրերը: Ահարոնյանը նույնպես նման նախասիրություն ուներ: «Արազը» ժողովածուի պատմվածքներում արևելահայ գյուղի կեցությունն՝ իբրև գլխավոր թեմայի ընտրության դաշտ, գրողի արձակի պոետիկայի մեջ դառնում է նաև հեղինակային միֆաստեղծման նյութ «Վիշապաձոր (Ավանդություն)» (1903) երկում: Առաջնորդվելով ազգի երկու հատվածների քաղաքական շահերի ու բարոյահոգեբանական կերտվածքի ընդհանրության առաջադրույթով՝ հեղինակը կառապանի պատմած ավանդությամբ թեման ներկայացնում է ժանրին բնորոշ լեգենդի, հեքիաթի, խրատական պատմության տարրերի համադրմամբ: Բարի և չար ուժերի բախման լեգենդանման պատումով գրողն, ըստ էության, ձաղկում է հեռվից եկած («օխտը սարից, օխտը ձորից էն կողմն էր մեր վաթանը») դժբախտ գաղթականներին ապաստան չտվող արևելահայ գյուղերից մեկի բնակչությանը:

Ահարոնյանն «Անհավատը» (1901) վիպակում գեղարվեստորեն արծարծում էր աշխարհայացքային բանավեճ: Սովորական հայ մարդու իրական ճակատագիրը շարունակ բախվում էր քաղաքական ու սոցիալական կյանքի անարդարություններին: Երկու հզոր կայսրությունների տիրապետության տակ տառապող ժողովուրդն օտար ու սեփական իշխողների կամայականություններից պաշտպանվելու միակ ապավենը հաճախ համարում էր ազգային հատկանիշի վերածված քրիստոնեական կրոնը, ազգային եկեղեցին: Մարդկային հարաբերությունները, ողջ գոյի օրինաչափությունները նա մեկնաբանում էր իրեն հասանելի կրոնական պատկերացումների միջոցով, կյանքի փորձով ձեռք բերված աշխարհընկալումներով: Բայց ահա կենսափորձը, իրողությունների թե՛ բնական ընթացքը և թե՛ պատահական դեպքը հաճախ դառը հիասթափություն են առաջ բերում նաև կրոնի, ավելի ստույգ՝ դրա սպասավորների պարզամիտ քարոզչության հանդեպ: Իսկ լավագույն դեպքում խորաթափանց հայ

մարդն ի վերջո բարոյական չափորոշիչ է համարում իր խիղճը և նեցուկ գտնում անձնական բարոյական պատասխանատվության զգացման մեջ: Իր ու ընկերոջ՝ Գասպարի մասին պատմելով՝ ըստ էության, այս միտքն է հաստատում վիպակի գլխավոր հերոսը՝ Աթոն: Նրա անհավատությունը կամ թերահավատությունը արդար ապրելու համար երկնային փոխհատուցում ստանալու մասին հայտնի կրոնական պատկերացումն իր կենսափորձով ստուգելու, առօրյա կեցության մեջ ակնհայտ անարդարությունը դատապարտելու հետևանք էին: Ակներև էր, որ իր ու ընկերոջ տարբեր ճակատագրերը խախտել էին նրա վստահությունը՝ հանդերձյալ կյանքում երկրային արարքների համար համարժեք վարձատրություն ստանալու մասին քրիստոնեական գաղափարի հանդեպ: Բայց և այնպես, նա ընդունում էր, որ քրիստոնյա լինելը հայ մարդուն բնութագրող հայտանիշ է: Հետևաբար, նրա «անհավատությունը» ժողովրդականաց- ված քրիստոնեության անհատական մի տարբերակ էր: Այս գործում ուշագրավ է այն, որ նեոռոմանտիկական նախասիրությունը գրողին արարման իներցիայով մղում է ազգային կյանքի կենսաղրվագները դիտարկելու մեծ աշխարհի, կրոնի, բնության ու հասարակության այս կամ այն օրինաչափությունների հետ ունեցած խորիմաստ առնչությունների մեջ: Այս հանգամանքը ընդարձակում է, ընդլայնում թե՛ այս գործի և թե՛ նրա ցանկացած երկի բովանդակությունը: Թեև այս ստեղծագործության մեջ նկատելի է անհարկի ձգձգվածությունը:

Ահարոնյանն իր աշխարհայացքի ու գեղագիտության դիտանկյուններից գեղարվեստական արձակում դեպի կենսական ճշմարտությունը տանող ուրույն, նոր ու թարմ ուղիներ էր գտնում: Գրողի հետաքրքրություններն առանձին դեպքերում կենտրոնանում ու խորանում են ոչ թե ազգային և սոցիալական կյանքի լայն պատ- կերման ու վերլուծության, այլ հատկապես անհատի ֆիզիկական ու հոգևոր, ենթագիտակցական զգացողությունների ու արարքների, նրա՝ «կամքը իբրև կենսական տարերք» դիտարկելու մեջ: Հեղինակի մտահղացումներին համահունչ էր նաև Միգուել դե Ունամունոյի հետևյալ տեսակետը. «Մարդու ներսում և ոչ թե նրանից դուրս պետք է որոնենք Մարդուն, տեղայինի և մասնավորի խորքերում՝ համընդհանուրը, իսկ ժամանակավորի և անցողիկի մեջ՝ հավերժականը»[2]: Գլխավոր կերպարի անհատական փորձի, կենսազգացողության, հետաքրքրությունների շրջանակում էլ գրողը պատկերում էր հասարակության և ազգի զարգացման տվյալ փուլի, ինչպես նաև մարդկանց առօրյայում ավանդաբար դրսևորվող կեցության լույսն ու ստվերը: Այս առումով ուշադրության է արժանի «Օհանի վիշտը» պատմվածքը: Այն առաջին անգամ տպագրվել է «Մուրճի» 1903 թ. N 12-ում, այնուհետև զետեղվել «Արազը» (1904) ժողովածուի մեջ: Հակված լինելով անհատի ու հանրության կյանքն արտացոլել դրամատիկ լարվածություն պարունակող փոքր ու մեծ կենսական դրվագներով՝ Ահարոնյանը կարևորում էր իր գրական կերպարների

[2] **Унамуно М.,** *Искусство и космополитизм, М., 1986, с 232.*

ոչ միայն հերոսական, ռոմանտիկ պոռթկումները ճակատագրի ու միջավայրի հանդեպ, այլև մարդու անհատականությունը լիարժեք, ներքին՝ ինքնաբուխ, անկեղծ մտորումներով ու թաքուն զգացողություններով գաղտնազերծելու խնդիրը: Նման մոտեցումը նրա հերոսին ընդդիմության մեջ էր դնում ազգային հնամենի ավանդույթների ու սովորույթների, կարծրատիպ մտածողության հանդեպ: Պատմվածքում միջավայրի, գյուղում ընդունված ազգային ավանդույթների հետ ծեր գյուղացի Օհանի ակամա բախումը առաջացել էր կնոջ մահվանից հետո կրկին կյանքի ընկերուհի ունենալու բնական ցանկության պատճառով: Այն համոզիչ դարձնելու համար հեղինակը կոմպոզիցիայի շրջանակում նրան ներկայացրել է, նախ՝ որպես մեծ գերդաստանի ավանդապահ նահապետ: Առօրյա սովորույթի համաձայն՝ նա ինքն էլ նույնիսկ կատակելով էր խոսում կնոջ հետ միասին նույն օրը մեռնելու իր ցանկության մասին՝ իբրև համատեղ երկարատև ապրած կյանքի տրամաբանական ավարտ:

Կողակցից զրկվելուց հետո Օհանի տառապանքը անամոք ու անծայր է թվում: Որդիների, հարսների ու թոռների ներկայությունն ամենևին չի խաղաղեցնում ծեր մարդու՝ միայնակությունից տանջվող մարմինն ու հոգին: Ծերացած, սակայն դեռ կենսական էներգիան պահպանած գյուղացին ապրելու համար իրեն հասակակից կյանքի ընկերուհու կարիքն է զգում, որի մասին ամոթից չի կարողանում պատմել որևէ մեկին: «Նա ամեն գիշեր պարզ ու որոշ հասկանում էր իր շուրջը՝ խավարի մեջ կատարվող կյանքը, նա համարյա բաց աչքով տեսնում էր, թե ինչպես ամենքը, ամենքը լավ են, երջանիկ են, մենակ չեն, միայն ինքն է որբ ու անտեր, միայն ինքն է մոռացված, որովհետև ծեր է, խարխլած: Այդ զգացմունքից նա և՛ տանջվում էր, և՛ ամաչում» (219): Օհանն, անշուշտ, նահապետական պատկերացումներ ունեցող, XIX դարավերջին ապրած գյուղացու տիպական կերպար է: Նա լավ է գիտակցում, որ այրի Հերիքի հետ ամուսնանալու իր ցանկությունը ավանդապահ գյուղը անբարյացակամորեն կընդուներ: Նույնիսկ համոզված էր, որ մեկ ուրիշը, եթե իր տարիքում նման քայլ կատարեր, ինքը նս կդատապարտեր: Հեղինակն, ահա, Օհանի անձնական ճակատագրով և ինքնազգացողությամբ է նրան բերում-հանգեցնում քարացած սովորույթի դեմ դժգոհելու գաղափարին: «Գյո՛ւղը…հազար բերան ունի նա, հազար խոսք, ու ամեն մի խոսքը մի թունավոր նետ է: Ի՞նչ կասի այդ գյուղը. իր հասակին, իր ծերությանը, իր դիրքին մարդիկ ե՞րբ են ամուսնացել… որդիները, թոռները… հարսները, խաղք ու խայտառակությո՛ւն» (223): Որդու՝ Սարգսի և քահանայի դատապարտող վերաբերմունքի մեջ է կոնկրետանում ավանդապահ գյուղի մոտեցումը Օհան ամու բնական, մարդկային ցանկության հանդեպ: Այդ բացասական վերաբերմունքն, ի վերջո, ավանդապահ համայնքի կողմից անհատի ազատությունը ճնշելու՝ սովորույթի ուժով ամրապնդված մի ձև էր: Իսկ Օհան ամու նկատմամբ հեղինակի համակրանքը պայմանավորված էր անհատի՝ անձնական կյանքում եր-

Էրաբեր 3-16

ջանիկ լինելու իրավունքը պաշտպանելու միտումով: Մարդու անհատականությունը ճնշող և ահապետական բարքերի արատավոր դրսևորումները, այդ ամենով պայմանավորված կենսական իրադրությունը կործանում էին ոչ միայն երիտասարդներին (օրինակ՝ Թումանյանի Անուշին, Սարոյին), այլև այդ սովորույթներին նախանձախնդիր Օհան ամու պես մի ծեր մարդու: Կյանքի մայրամուտին կեցության հաճույքը զգալով գոյատևելու համար նա բախվել էր անանցանելի պատնեշի: Տղամարդու կյանքը ջերմացնող էներգիայի աղբյուրի՝ կյանքի ընկերուհու բացակայության պատճառով էլ հանգում է Օհան ամին իր ցուրտ անկողնում: «Առավոտյան քահանան եկավ նրան հաղորդեց, գիշերը նա զառանցում էր գարնան տերևների մասին. մի երկու անգամ Հերիքին հիշեց, և լուսաբացին նրա փոքրիկ, վտիտ մարմինը իր լայն անկողնի մեջ սառած էր ու անշարժ» (226):

«Օհանի վիշտը» պատմվածքում, մեր կարծիքով, զգալի է նաև դարասկզբին լայն ճանաչման արժանացած Զ. Ֆրեյդի՝ հոգեվերլուծության, մարդու մեջ սեռական հակման հզոր ներկայության մասին ուսմունքի որոշ արձագանքը: Այն միաձուլված է անհատի ճակատագրի հանդեպ գրողի իմաստասիրական, հումանիստական մտահոգությանը: Ահարոնյանն, ի վերջո, համակարծիք էր այն մըտքին, ըստ որի՝ կյանքում ամեն ինչ պետք է ծառայի մարդու երջանկությանը, նրա առողջ զգացմունքներն ու ցանկությունները բավարարելուն:

Այսպիսով, վերոհիշյալ երկերում Ավ. Ահարոնյանը արևելահայ գյուղը ևս դիտարկում էր իր գաղափարագեղագիտական հայեցողության գործուն տեսադաշտում:

ТЕМА ДЕРЕВНИ В ХУДОЖЕСТВЕННОЙ ПРОЗЕ А. АГАРОНЯНА

ХАЧИКЯН Г. В.

Резюме

Тема деревни нашла отражение в прозаических произведениях А. Агароняна (1866-1948), написанных в 1900-х гг. и вошедших в сборник “Араз” (1904). Сельскую действительность он воссоздал на основе своих эстетических взглядов и неоромантических представлений. Герои его произведений наделены героическими чертами, им также присущи суеверие и трагическое восприятие действительности. Нравственно-психологический образ созданных им героев является в целом отражением его идейно-эстетической концепции.